ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 2133
ԾԱԾԿԱԳԻՐԸ՝ «ՀԱՆ-ԳՀԾՁԲ-11/18»

ք. Երևան «26» հուլիսի 2018 թ.

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ն, ի դեմս ընկերության Գլխավոր տնօրեն Ա. Գասպարյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և անհատ ձեռնարկատեր Հունան Մանթաշյան Սևանի, (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Ուսուցողական սեմինարների կազմակերպման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **5 817 000 (հինգ միլիոն ութ հարյուր տասնյոթ հազար) ՀՀ դրամ**: Կատարողը ԱԱՀ վճարող չի հանդիսանում:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող

ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **12** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ	ԱՁ «Հունան Մանթաշյան Սեվանի»
ք.Երևան-0042, «Զվարթնոց» ՕԿ	ք. Նոյեմբերյան, Շահումյան 51 տ.
Ի.Գասպարյան 33	ՀՎՀՀ 70412093
Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ	«Յունիբանկ» ՓԲԸ
ԱՇԻԲ «Զվարթնոց» մ/ճ	հ/հ 24109011426500
ՀՎՀՀ 01216144	
Գլխավոր տնօրեն	
_____**Ա.Գասպարյան**	_____ **Հ. Մանթաշյան**
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«26» հուլիսի 2018 թ. կնքված
N 2.133 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության							
Հ/հ	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը*	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը
1	80521200/1	ուսուցողական սեմինարներ՝ ԱՏԾ աշխատակիցների ուսուցում, համաձայն ԻԿԱՕ-ի doc 8168 ձեռնարկի, ԻԿԱՕ-ի PANS-OPS սխեմաների ընթացակարգերի մշակում RNAV, GNSS և RNP չափորոշիչներով	դրամ	2017000	1	Սինգապուր, Սինգապուրի Ավիացիոն Ակադեմիա	2018 թվականի նոյեմբեմբերի 12-30-ը
5	80521200/5	ուսուցողական սեմինարներ՝ <<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ օդային երթևեկության կառավարման կարգավարների աշխատատեղում վարժող հրահանգիչ (On-the-Job Training Instructors) և քննող/գնահատող (Examiners/Assessors) կարգավարների ուսուցմանդասընթաց	դրամ	3800000	1	Լյուքսենբուրգ, Կիրչբերգ, Եվրոկոնտրոլ Ավիացիոն Ինստիտուտ	2018 թվականի սեպտեմբերի 10-21-ը

***Ծառայության մանրամասն տեխնիկական բնութագրի նկարագրությունը ներկայացված է սույն պայմանագրի Հավելված 1.1-ում**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ
ք.Երևան-0042, «Զվարթնոց» ՕԿ
Ի.Գասպարյան 33
Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ
ԱՇԻԲ «Զվարթնոց» մ/ճ
ՀՎՀՀ 01216144
Գլխավոր տնօրեն
_____ **Ա.Գասպարյան**
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

ԱՁ «Հունան Մանթաշյան Սեվանի»
ք. Նոյեմբերյան, Շահումյան 51 տ.
ՀՎՀՀ 70412093
«Յունիբանկ» ՓԲԸ
h/h 24109011426500
_____ **Հ. Մանթաշյան**
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 1.1
«26» հուլիսի 2018 թ. կնքված
N 2.133 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1-ին չափաբաժին՝ «ԱՏԾ աշխատակիցների ուսուցում, համաձայն ԻԿԱՕ-ի doc 8168 ձեռնարկի, ԻԿԱՕ-ի PANS-OPS սխեմաների ընթացակարգերի մշակում RNAV, GNSS և RNP չափորոշիչներով»

Ընկերության ԱՏ ծառայության «ԱՏԾ աշխատակիցների ուսուցում, համաձայն ԻԿԱՕ-ի doc 8168 ձեռնարկի, ԻԿԱՕ-ի PANS-OPS սխեմաների ընթացակարգերի մշակում RNAV, GNSS և RNP չափորոշիչներով» ուսուցման ծառայության կազմակերպման գնման առարկայի բնութագիր

1. Գնման առարկան իրենից ներկայացնում է ընկերության ԱՏ ծառայության աշխատակիցների ուսուցում, համաձայն ԻԿԱՕ-ի doc 8168 ձեռնարկի, ԻԿԱՕ-ի PANS-OPS սխեմաների ընթացակարգերի մշակում RNAV, GNSS և RNP չափորոշիչներով սխեմաների կոռուցում և մշակում ուսուցման դասընթացների կազմակերպումն ու իրականացումը:

1.1. Դասընթացներն անցկացվում են ծառայության մատուցողի մասնագիտական ուսումնական դասարանում, համապատասխան պատրաստվածություն ունեցող մասնագետների կողմից:

1.2. Դասընթացները պետք է ներարեն հանձնարարություններ, քննություններ և գործնական ընթացակարգերի նախագծման բաժիներ:

1.3. Դասընթացների մասնակիցները քանակը՝ մեկ աշխատակից:

1.4. Դասընթացների տևողությունը 3 շաբաթ, դասընթացների մեկնարկի օրը նախապես կհամաձայնեցվի կողմերի միջև:

1.5. Դասընթացների ծրագիրը պետք է ներառի հետևյալ բաժիները՝

- ✓ RNAV / GNSS / RNP սխեմաների մշակման ընդհանուր չափանիշների կիրառում
- ✓ RNAV / GNSS / RNP սխեմաների ճանաչման էական տարրերը
- ✓ RNAV / GNSS / RNP սխեմաների մշակման գործընթացի զարգացումը

RNAV

- ✓ Հիմնական սկզմունքներ (General principles)
- ✓ Ճանապարհային սահմանում (Path definition)
- ✓ Երկրի ռեֆերենց համակարգի (հիմանակետ) նավիգացիա(Earth-referenced navigation)
- ✓ Սխեմաներում VOR սարքավորման կիառումը RNAV-ի համար (Very high frequency omnidirectional radio range distance measuring equipment RNAV)

GNSS

- ✓ GNSS-ի ընդհանուր ներածություն (Introduction to GNSS)
- ✓ Ճանապարհային սահմանում (Path definition)
- ✓ Երկրի մոդել (Earth model)
- ✓ Ֆիկսված կետերի և ուղղիների հաշվարկ (Calculation of fixes and paths)

- ✓ Օդանավի սարքավորումների կառավարում (Airborne equipment operation)
- ✓ Ընթացակարգերի չափանիշները և կիրառում (Procedures criteria and application)
- ✓ Գործնական վարժություններ (Practical exercise)

Ուղղաձիգ նավիգացիա (VNAV) (Principles of Baro VNAV)

- ✓ Baro VNAV- առանձնահատկություններ ()
- ✓ Մոտեցումների սխեմանների վերջնական հատվածներ (Final approach segment)
- ✓ Ջերմաստիճանի ազդեցությունները եւ փոխհատուցում (Temperature effects and compensation)
- ✓ Ընդհատված մոտեցում (Missed approach)
- ✓ Ընթացակարգերի հրապարակում (Promulgation of procedures)
- ✓ Գործնական նախագծման աշխատանքներ (Practical laboratory design exercise)

Լրացված GNSS (Augmented GNSS)

- ✓ Համակարգի շահագործում (System operations)
- ✓ Արբանյակային եւ գետնի վրա տեղադրված համալրման համակարգերը (Satellite and ground-based augmentation systems)
- ✓ Ճանապարհային սահմանում (Path definition)
- ✓ Հորիզոնական և ուղղաձիգ համակարգեր (Lateral and vertical)
- ✓ Նախագծման չափանիշներ (Design criteria)
- ✓ Մոտեցումների վերջնական հատվածներ (Final approach segment (FAS)
- ✓ FAS տվյալների բլոկ (FAS data block)

RNP

- ✓ Ընդհանուր ներածություն (General principles)
- ✓ Նավիգացիոն բնութագրեր (Navigation performance)
- ✓ Պահպանությունը և RNP (Containment and RNP)
- ✓ Մոտեցման չափանիշներ (Approach criteria)
- ✓ Ընդհատված մոտեցում (Missed approach)
- ✓ Նախագծման կուցվածք (Procedures construction)
- ✓ Հրապարակում (Promulgation)

RNAV/GNSS/RNP մեկնման սխեմաները Depurtures

- ✓ Ընդհանուր չափանիշներ (General criteria)
- ✓ Ողիղ (Straight)
- ✓ Պտույտով (Turning)
- ✓ GNSS հիման վրա մեկնման սխեմաների վարժանքներ (GNSS departure exercise)
- • Թռիչքների վավերացման ընթացակարգեր (Flight Validation Procedures)

2. Դասընթացների ավարտից հետո մասնակիցը պետք է ստանան ԻԿԱՕ-ի կողմից սերտիֆիկացված համապատասխան ուսմնական հաստատության կողմից վկայական:
3. Մասնակցի ճանապարհածախսի և գիշերակացի հետ կապված ծախսերը հոգում է Պատվիրատուն:

5-րդ չափաբաժին՝ <<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ օդային երթևեկության կառավարման կարգավարների աշխատատեղում վարժող հրահանգիչ (On-the-Job Training Instructors) և քննող/գնահատող (Examiners/Assessors) կարգավարների ուսուցման դասընթաց

Գնման առարկա է հանդիսանում օդային երթևեկության կառավարման կարգավարների աշխատատեղում վարժող հրահանգիչ (On-the-Job Training Instructor) և քննող/գնահատող

(Examiner/Assessor) կարգավարների ուսուցման դասընթացներն՝ Քաղաքացիական ավիացիայի միջազգային կազմակերպության (ԻԿԱՕ) պահանջների համաձայն:

- դասընթացները պետք է ներառեն տեսական ուսուցման և վարժասարքային գործնական պարապմունքներ: Տեսական ուսուցումը պետք է պարունակի դասավանդման տարբեր մեթոդներ, ինչպիսիք են դերային խաղարկումներ, տեսանյութեր, փաստաթղթերի ուսումնասիրություն և քննարկումներ: Վարժասարքային գործնական պարապմունքները պետք է ներառեն վարժման տեխնիկայի գործնական վարժություններ, որոնք իրականացվում են ռադարային վարժասարքի վրա և զուգորդվում են դասավանդողների կողմից մանրամասն արձագանքներով:
- դասընթացների ծրագիրները պետք է մշակված լինեն ԵՎՐԱԿՈՆՏՐՈԼ- ի «ATCO Development Training OJTI Course»-ի պահանջների համաձայն և հիմնված լինեն 2015 թվականի փետրվարի 20-ի 2015/340 Եվրամիության Հանձնաժողովի կանոնակարգի վրա:
- դասընթացի ծրագրերը նպատակաուղված են ''Դիտարկում'' ներառող որակավորման նիշ կրող ՕԵԿ կարգավարներին
- դասընթացները ներառում են ՕԵԿ կարգավարների աշխատատեղում վարժող հրահանգչի և քննող/գնահատող կարգավարի հմտությունների գնահատում, թե տեսական և թե գործնական քննությունների տեսքով:
- դասընթացները և քննությունները պետք է անցկացվեն անգլերեն լեզվով,
- անհրաժեշտ բոլոր նյութերը պետք է լինեն անգլերեն լեզվով:

Օդային երթևեկության կառավարման կարգավարների աշխատատեղում վարժող հրահանգիչ (On-the-Job Training Instructor) և քննող/գնահատող (Examiner/Assessor) կարգավարի ուսուցման դասընթացներն ավարտելուց հետո մասնակիցները պետք է անգլերեն լեզվով ստանան՝

- մասնակցի ընդհանուր առաջադիմության վերաբերյալ զեկույց,
- ավարտական վկայական, ինչը պետք է հավաստի ծառայությունների գործունեության շրջանակում ծրագրով նախատեսված ուսուցման ավարտը:
- Օդային երթևեկության կառավարման կարգավարների աշխատատեղում վարժող (On-the-Job Training Instructor) հրահանգչի դասընթացի տևողությունը պետք է լինի տաս /10/ օր, առնվազն հիսունվեց /56/ ակադեմիական ժամի հաշվարկով՝
- Օդային երթևեկության կառավարման կարգավարների (Examiner/Assessor) քննող/գնահատողի դասընթացի տևողությունը հինգ /5/ օր, առնվազն քսանհինգ /25/ ակադեմիական ժամի հաշվարկով՝

Պատվիրատուի ՕԵԿ կարգավարները պետք է անցնեն՝

- աշխատատեղում վարժող (On-the-Job Training Instructor) հրահանգիչ-կարգավարի ուսուցում՝ թվով մեկ /1/ ՕԵԿ կարգավար,
- քննող/գնահատողի (Examiner/Assessor) ուսուցում՝ թվով մեկ /1/ ՕԵԿ կարգավար,

Մասնակիցների ճանապարհածախսի և գիշերակացի հետ կապված ծախսերը հոգում է Պատվիրատուն:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ	ԱՁ «Հունան Մանթաշյան Սեվանի»
ք.Երևան-0042, «Զվարթնոց» ՕԿ	ք. Նոյեմբերյան, Շահումյան 51 տ.
Ի.Գասպարյան 33	ՀՎՀՀ 70412093
Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ	«Յունիբանկ» ՓԲԸ
ԱՇԻԲ «Զվարթնոց» մ/ճ	h/h 24109011426500
ՀՎՀՀ 01216144	
Գլխավոր տնօրեն	
Ա.Գասպարյան	**Հ. Մանթաշյան**
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ.	Կ.Տ

Հավելված N 2
«26» հուլիսի 2018 թ. կնքված
N2.133 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում				
			սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	80521200 /1	ուսուցողական սեմինարներ՝ ԱՏԾ աշխատակիցների ուսուցում, համաձայն ԻԿԱՕ-ի doc 8168 ձեռնարկի, ԻԿԱՕ-ի PANS-OPS սխեմաների ընթացակարգերի մշակում RNAV, GNSS և RNP չափորոշիչներով				2017000	**2 017 000**
5	80521200 /5	ուսուցողական սեմինարներ՝ <<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ օդային երթևեկության կառավարման կարգավարների աշխատատեղում վարժող հրահանգիչ (On-the-Job Training Instructors) և քննող/գնահատող (Examiners/Assessors)կարգավարների ուսուցմանդասընթաց	3800000	3800000	3800000	3800000	**3 800 000**

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ
ք.Երևան-0042, «Զվարթնոց» ՕԿ
Ի.Գասպարյան 33
Հ/Հ 247064200089 ՀՀ դրամ
ԱՇԻԲ «Զվարթնոց» մ/ճ
ՀՎՀՀ 01216144
Գլխավոր տնօրեն
_____**Ա.Գասպարյան**
(ստորագրություն)

Կ.Տ.

ԿԱՏԱՐՈՂ

ԱՁ «Հունան Մանթաշյան Սեվանի»
ք. Նոյեմբերյան, Շահումյան 51 տ.
ՀՎՀՀ 70412093
«Յունիբանկ» ՓԲԸ
հ/հ 24109011426500
_____**Հ. Մանթաշյան**
(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված 3
« » հուլիսի 2018 թ. կնքված
N պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« »« » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » հուլիսի 2018 թ. կնքված
N պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն